ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/119 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «05» սեպտեմբերի 2019թ.

2019թ-ի օգոստոսի 20-սեպտեմբեր 5, ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում գտնվող «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի վարչական շենքում տեղի ունեցավ ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/119 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ա. Գևորգյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի տեխնիկական տնօրեն.
Դ. Մադոյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՄՍ ԱԿ և ՄԻԲ-ի պետի պ/կ.
Ս. Հարությունյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՄՍ ԱԿ և ՄԻ բաժնի պետի տեղակալ.
Ա. Ղոսալմյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի էլեկտրական արտադրամասի պետ.
Ա. Վարդանյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի շուկայի ուսումնասիրության և հաշվառման գծով մասնագետ.
Բ. Հարությունյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի իրավապայմանագրային բաժնի իրավաբան.
Ա. Պետրոսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով.

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է յոթ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Գևորգյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՄԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/119 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:
2. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ԵՄԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/119 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Ա. Գևորգյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1	Ծախսաչափ 200mm	5674500
2	Ծախսաչափ 150mm	5383500
3	Ձեռքի ծախսաչափ	11120
4	Հոսանքի շղթաների փորձարկման տերմինալ (CT Test Terminal)	40100
5	Ռեագենտ	1349420
6	Ռեագենտ	1349420

ԵՄԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/119 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի օգոստոսի 20-ին, ժամը «17:45»-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն հրավերի վերաբերյալ ներկայացվել է երկու հարցում՝ սույն թվականի օգոստոսի 14-ին և 15-ին, հանձնաժողովի կողմից հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը համակարգի միջոցով տրամադրվել է հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ԵՄԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/119 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցեներ	Էլ. փոստ
1	«Ալեքս-Պրո» ՍՊԸ	ք. Երևան, Ռոստովյան 36	alexprollc1@gmail.com
2	«ՆՈՎԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ	ք. Երևան, Վրացական փող., 7/8 շենք	novatradeam@gmail.com

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցները հայտերը կազմել և ներկայացրել են ԵՔԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/119 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան. ,
- Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.,
- Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.,

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների զբաղեցրած տեղերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

Չափաբաժնի համարը	Մասնակցի		Մասնակիցների առաջարկած գները՝	
	Զբաղեցրած տեղ	Անվանում	Արժեք	Ընդհանուր գին
1*	-	«ՆՈՎԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ	9850000	9850000
2*	-	«ՆՈՎԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ	9650000	9650000
	-	«Ալեքս-Պրո» ՍՊԸ	5700000	5700000
3	-	-		
4	-	-		
5*	1	«ՆՈՎԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ	1700000	1700000
6*	1	«ՆՈՎԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ	1700000	1700000

*տվյալ չափաբաժնի մասով (1-ին, 2-րդ, 5-րդ, 6-րդ) վարվել են բանակցություններ, արդյունքները ներկայացված են ստորև:

Որոշվեց՝

1. Ա. Գևորգյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:
3. Նիստը կասեցնել՝ գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման նպատակով:

4. Տիրան Լաճիկյանին՝ ծանուցել 1-ին, 2-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժիններ մասով բավարար գնահատված մասնակիցներին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման վերաբերյալ:

Կողմ՝ 7
Դեմ՝ 0

2. ԱՌԱՋԻՆ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հաշվի առնելով այն, որ ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/119 ծածկագրով ընթացակարգի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով մասնակիցների կողմից առաջարկված գնային առաջարկները գերազանցում են տվյալ չափաբաժինների մասով գնումն իրականացնելու համար գնման հայտով սահմանված գինը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի, մասնակիցների հետ վարվեցին միաժամանակյա բանակցություններ՝ առաջարկված գների նվազեցման նպատակով:

Բանակցությունների համար սահմանվեց ժամկետ՝ 15 րոպե տևողությամբ:

Բանակցությունների վերջնաժամկետին «ՆՈՎԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվեց նոր նվազեցված գնային առաջարկ 5-րդ և 6-րդ չափաբաժնի մասով՝ 5-րդ չափաբաժին 1349000 ՀՀ դրամ, 6-րդ չափաբաժին 1349000 ՀՀ դրամ: Այլ առաջարկներ չեն ներկայացվել:

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարել Աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

2. Ընթացակարգը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած, և հաստատել ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/119 ծածկագրով ընթացակարգը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին» հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 7
Դեմ՝ 0

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐՎԱ ԵՎ ԺԱՄԻ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ քան Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 43-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ին ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում գտնվող «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի վարչական շենքում:

Կողմ՝ 7
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Գևորգյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Դ. Մադոյան _____

Ս. Հարությունյան _____

Ա. Ղոսալմյան _____

Ա. Վարդանյան _____

Բ. Հարությունյան _____

Ա. Պետրոսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____